


րև անուռնէն հանուած ձև ու վէպ մ'է Ստարիոս:

Ե. Այսպէս միջին դարու հայ լեզուն ոսկր շունի, և ամէն կողմ կը դառնայ անարգել, կը ցնանային՝ կ'արթննային, և Հայոց առաքելական ցուցակին մէջ նոր անուն մը կը բուսնէր: Պէտք չկար որ հինքերէն աւանդուէին. իրենք կ'արձա նագրէին, և հասարակական պատմական կը լինէր: Ենորհակալ լինելու ենք՝ որ գէթ երկար վէպեր չհիւսեցին անոնց մասին: Պարզ ակնարկութիւնք են միայն, ազգասիրութեան վայրկենային ցոլցեր, հերքելիք այն դիրուժեամբ և իրաւամբ որով ըստեցան: Եւ բոլորն ալ ժ դարէն այս կողմ, ուստի և զուրկ են պատմական ամէն հեղինակութենէ, մանաւանդ թէ հակառակ հնոց ու մերժող զիրար, որպէս զի մեր ալ մեր կարգին անաշխատ և անկասկած զուրս թափենք զանոնք հայ եկեղեցւոյ պատմութենէն, որոյ մէջ աւելի կամ պակաս չափով տեղ տուին անոնք՝ Չարմեանս<sup>1</sup>, Ալիշանս<sup>2</sup>, Օրմանեանս<sup>3</sup> և ուրիշներ ևս:

Եւ վերջապէս ինչ տարօրինակ պահանջ եղած է և կը մնայ մերը, մինչդեռ Եղեմիա իւր առաքեալը սիրայօժար ընդունուած ու խաղաղութեամբ վախճանած կը պատմէ իւր մէջ, մեր ցով փոխադրել զայն կենդանի, և անոր հետ մեր Հողին վրայ բերել թափել այնքան առաքեալներ, անարգել ու կոտորել տալ զանոնք ամենէն խուժուած եղանակներով, հնոց, առիւծներ, ցուր, մորթագերծութիւն, խաչ և սուր: Ասով մեր հին զրիչներն ուզեցին աւելի քաղաքակիրթ ցուցնել զմեզ քան զեղեակիրս. և կամ փառք մ'էր արեօք՝ ձրի Հայաստանի վրայ հրաւիրել Փրկչին առ Երուսաղէմ տուած կշտամբութիւնը՝ թէ «կոտորէիր զմարգարէս և քարկոծ աննէիր զառաքեալսն առ քեզ»: Հրատարինք այդ ձախորդ ու մտացածին պար-


ձանցներէն, զորս մեր նախնիք թողուցին մեզ անզիտակցարար, և իրականութեան փարինք:

(Շարայարելի) Հ. Վ. ՀՅՈՒՆԻ



ԴԻՏՈՂ ՈՒԹԻՒՆՆԵՐ

« ՀԱՅԵՐԷՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ » ՈՒՆ՝



(Շար. տես Բագմ. 1927 էջ 14)

Զ. — Հոլարան (էջ 21-2).

Պ. Աճառեան Առձեռնի մեկնութեան չէ հանած, և կ'ուզէ այս բառին համար «ըմբշամարտներուն հանուելու, մերկանալու տեղ» գրած ըլլար բարգրբը: Սխալ են թաղարկութիւն է թէ Առձ. իր նշանակութիւն «հոլ» = հոլլ = խումբ = ժողով իմաստներէն առած ըլլայ. այլ՝ հոլլեմ, հոլլեմիս բայէն որ բանալ, պարգել, մէջ տեղ հանել կը նշանակէ, ա. նշիթ օրինակները: Ուստի հոս «հոլարան» կամ լաւ ևս «հոլարան» ըսել է բաց տեղ, կրկէս, ազոն, տեսարան = scena: « Առ ցերեզմանօք յաժիկ, այր առ այր և չոկ առ չոկ մարտատեսիկ հոլարանիկ »ը, սապէս կարելի է թարգմանել. Այս պատերազմի կերպարանք ունեցող զրիկսիւն (մէջ), մարդ մարդու, և խումբ խումբի ցով կը թափառին զերեզմաններու շուրջ: Առձեռնի տուած մեկնութիւնը ամենապարզ է, իմաստին յարմար և լուսազոյն:

Է. — Առուզնայը (էջ 56).

Դատաստանագրքի բնագրին և ամենահին օրինակները « Ասեանք » և « Առեանգութիւն » կը զբնն: Ուստի տգէտ օրինակողի մը սխալը՝ հարկ չկայ մեզ կանոն ընենք, և իբր եոր բան մը յարգենք:

1. Զ. Բ. Ա. 298. — 2. Ա. ր. արիւս. 22-23, 41-47 էւ. — 3. Ա. ր. 30, 45-46.

1. Հ. ր. Աճառեան. Տ. ր. Վեհերիկ 1913.

Ը. — Գաղղեր (էջ 58).

Բնագիրն, հնագոյն օրինակը և ընտրե-  
լագոյնը՝ այս բառը չունին. կը գրեն  
«վարդամակ և կարրապատս ձարմահոս»:  
Մեր երկու ձեռագիրը միայն Թ. Թ. 993,  
451 (ԺԷ—ԺԲ դարուն) ունին «Ջտղեր».  
որ հայերէն չէ հմմ. Calceus=կօշիկ են:  
Իսկ «կարրապատ» բառին համար, Պ.  
Աճառեան կ'ըսէ Թէ Առձ.ի մեկնութիւնը  
«ուղիղ չէ, աւելի ուղիղ է Բաստամեան»:  
Ճիշտ չէ այդ վճիռը. Բաստամեանն ու  
Առձեռնը նոյն մեկնութիւնը կու տան:  
Բաստամեան կը գրէ (տ. էջ 264, ծնթ.  
556). «կարրապատ, որ նշանակում է  
սրտեպնեքի փարոյք», որուն կովկասի մէջ  
Հայք պաձոյձ կ'ըսեն և վրացիք պաձիճի:  
Առձեռնը, կարրապատ = ձիւնք փարոյք:  
Ընթերցողը կը տեսնէ արդէն որ երկուքն  
ալ ճիշտ մի և նոյն բացատրութիւնը կու  
տան. առաջինը ռուսահայերէն, միւսը՝  
պղլաւահայերէն:

Թ.. — Թեգնեքերան (էջ 60).

Բնագիրն և հին ու ընտիր օրինակը  
«Էւ Թեգանիքն դիպակաւ» կը գրեն:  
Միայն երկու օրինակը (ԺԶ—ԺԷ դարուն)  
Բաստամեանի օրինակին պէս ունին «բեզնե  
բերանն դիպիով»:

Ժ. — Կիսավաստակ (էջ 62).

Տրուած մեկնութիւնը շատ լաւ է: Սա-  
կայն կը Թելագրենք «Նոր Բասեր»-ուն  
ազնիւ հեղինակին և մեր բոլոր ընթեր-  
ցողաց, Թէ՛ Բաստամեանցի օրինակին գոր-  
ծածած «հարախալ» բառը սխալ է, և  
ոսովին աղաւաղ հնչմամբ գրուած: Բա-  
սին նախնական և բնիկ ձևն է «ՀԱԿԱ-  
ՐԱՆ», ինչպէս կը գրէ մեր բնագիրն, հնա-  
գոյն և ընտրելագոյն բոլոր օրինակը:  
Բնագիրը, դատաստանագրքի ցանկին մէջ  
(հմմ. էջ 122), սկիզբը գրած է «հարա-  
կալաց». բայց սխալն անդրադառնալով՝  
Բէն կէնի փոխեր է և կէնը՝ Բէի. սա-  
կայն ասով ալ զոհ չէ եղած, այլ բասին

վրայ՝ սողի մէջ գրած է ուղիղ ձևը «ՀԱ-  
ԿԱՐԱՆ», և 562 էջին մէջ ևս այսպէս  
գրած է ուղիղ ձևով: Բասը զուտ հայե-  
բէն է և կը նշանակէ կիսուսակէս աշխա-  
տաւոր, կիսավաստակ, (տնի. օրթաղ).  
գեղեցիկ բառ մ'է այս և ընդհանուր գոր-  
ծածութեան յանձնարարելի: — Մեր 22.  
Թթ. 993, 451 գլ. ՄԼԷ վերնագիրը կը  
նշանակեն «վասն մարտպեերոյ և մշա-  
կաց». տ. էջ 615, էջ 175, Հակարաշ  
բառին տեղ «Մարայ» (լաւ ևս) Մորա-  
պիր՝ որ զուտ արաբերէն է, և կը նշո-  
նակէ «բանի մը չորրորդ մասն, ցատորդն  
առնուլ». Ինչպիսա բային տեղ. դերբայն  
է, ար. Երկու ձեռագիրներն ալ ԺԷ—ԺԶ  
դարուց են:

ԺԱ. — Պատառել (էջ 68).

Աճառեան կ'ըսէ. «Հոս կը նշանակէ  
կողոպտել»: — Ոչ, այլ կը նշանակէ  
պատը ծակել, քանալ, պատռել: Որովհետև  
աս բառը, գրաբար «Ական հատանել»  
«Ականահատ» բացատրութեանց ոսովիկ  
Թարգմանութիւն է. արդ «ական հատա-  
նել զտան» կը նշանակէ տան մը պատերը  
փորել, պատռել, ծակել. հմմ. ՄՏԹ. ԻԻ,  
43 «էթէ գիտէր տանուտէրն յորում ժա-  
մու զող գայ, հսկէր, և ոչ տայր Թոյլ  
ական հատանել զտան իւրոյ», ուր լա-  
födere, յոյն. διερουծիγναι = փորել =  
պատռել կը Թարգմանեն: — Բնագիրն  
ունի «Ականահատաց»:

ԺԲ. — Պոռքետորայ (էջ 68).

Ձեռագրաց տարբերութիւնները յիշելէն  
վերջ՝ կը յաւելու Պ. Աճառ. «Ըստ իս պէտք  
է սրբագրել «Պոռքետորայ», իբր լա. pro-  
sequi բառէն»: Բայց այդ սրբագրութիւնը  
կարելի չէ ընդունիլ: Նախ, որովհետև  
չոյր ձեռագրաց հակառակ է, հետևաբար  
քմահանոյ: Երկրորդ՝ որովհետև բառիս  
արտաքին կազմը, հնչումն ևն, չի մերժեր  
որ յունարէն ըլլայ: Բնագիրը «Պոքքե-  
տորայն» կը գրէ: Դատաստանագրքի այս  
մասը (հմմտ. Ձեռք. էջ 529-535) Մի.

Գոռ օտար ազգիւրէ մ'առեր է. և որովհետև տև յոյն ու լատին լեզուներն չէր գիտեր, քերականական կամ լեզուաբանական կանոնաց նս' ոչ այնքան տեղեակ, անոր համար, արքունիքի վերաբերեալ բոլոր պաշտօնական բաները, իր անձնական հնչմամբն ու ճաշակով, առանց ո՛ր է օրէնքի, տառադարձքը է: Ուստի, մենք չենք կրնար որոշ և վճռական կերպով՝ ըսել թէ անոնցմէ իւրաքանչիւրը. յոյն կամ լատին ո՛ր բառին կը համապատասխանէ, այնպէս որ մի և նոյն բառը՝ կրնայ Չ-Յ տարբեր մեկնութիւններ ունենալ, ամէնքն ալ հաւանական:

Նոյնն ըսելու է Ռեքիմար և Սքոդար բաներու մասին սուած մեկնութեան:

« ՈՐԶՊՓ » ց էլ 72, Միխիթար Գոշէն յառաջ կը բերէ այս հատուածը, արդի ոճով շեշտելով «որչափ» բառը: Միայն է այս շեշտը, այլ պէտք է գրել ու կարդալ և ըսել «որչափ». այսպէս գրած է բնագիրը, բոլոր ձեռագիրք և Խաստամենցի հրատարակածը. — Իրաւ է որ հայերենի մէջ շեշտը բառին վերջին վանկի վրայ է, սակայն կան ըսնի մը բաներ որ բացատրութիւն կը կազմեն, զորս՝ առթէն օգտուելով կ'ուզեմ հոս յիշել. — Յոգական և Յարաբերական զերանուններն (Այս, այդ, այն. Սա, դա, նա. Սոյն, դոյն, նոյն. Որ), երբոր մակրայական մասնիկներու (պես, չափ, քան), կամ ո և է միավանկ բառի մը հետ՝ առանց յօդակապի բարդութիւն, շեշտը ՄԻՇՏ առաջին վանկի վրայ է. որովհետև այս պարագային իբրև երկու բառ կը նկատուին: Օր. հմ. Այսպէս, ինչպէս, սաչափ, նոյնքան, սրպէս են: — Ընդհակառակն, կ'ըսենք սայպէ՛ս, սոյն. օրինակ են երբոր յիշեալ զերանուններն յօդակապով միացեր են և կամ բազմավանկ բառի մը հետ են. (տես Զարգացելոց էլ 619, Այտն. Քեր. էլ 114): Տողերս «Նոր բաներ»ուն հեղինակին չէ որ կ'ուզուովին, այլ արդի հայ զրականութեան մէջ շատ մը զեղծողներուն դէմ, որոնք՝ օտար լեզուաց արուեստակեալ հնչմանց տգիտարար փարած՝ մեր ակնդիտիկ հայերէնը

կ'ապականեն: Տեսէք հայ ամսաթերթի մը շեշտերը:

ԺԳ. — Սաղաւաթ (էջ 82).

Կ. Գանձակեցոյն այս բառը կը համարի արաբերէն Սալասաթ բառին տառադարձութիւն ըլլայ, և իմաստին համամաս կը մեկնէ «Նոսեր»: Այս մեկնութիւնն առած է նոյն գրքի հրատարակչին էլ 228, ծնթ. Չէն: Կարծեմ թէ ուղիղ չէ այդ բացատրութիւնը: Նախ, «սալասաթ»էն յառաջ չի գար. երկրորդ, սալասաթ բառը արաբերենի մէջ՝ բացարձակապէս Նոսեր չի նշանակեր, այլ միայն ԱՅՕԹԹ, այսինքն՝ աղօրքեր յոգ. թուով, (էջ. Սալաթ, իգ.):

Սաղաւաթ ուրեմն, ՍԱՂ, արաբերէն ամենատղճարական ածականէն յառաջ կու գայ, (հմմ. տնկ. սաղ ու սէլամէթ), որ առար ածանցով՝ եղած է վերացական անուն՝ սաղասաթ, ինչպէս հայերէն Առողջ ուրիան ածանցով՝ կ'ըլլայ առողջուրիան: Սաղ = առողջ, ողջ, բարեկենդան. Սաղասաթ՝ = առողջութիւն, կենդանութիւն: Ուստի, « Զմիւս որդին տալ գետոյն Տիգրիսի Սաղաւաթ », ըսել է. « Միս որդին Տիգրիս գետին կենդանութեան՝ արևիկ շնորհել » (հրամայեց): Հոս կենդանութեան բառը հիշտ սոյն իմաստն ունի՝ ինչ որ կ'ունենայ երբ բաժակ մ'ըմպելով կ'ըսենք. « կենդանութեանդ » « արեւոզ » են: — Սաղաւաթ բառն իր բնիկ հնչմամբ գրուած է և ոչ տառադարձութեամբ:

ԺԵ. — Անձնակից (էջ 85).

Կը թարգմանէ մի և նոյն անձն ունեցող: Աւելի ուղիղ պիտի ըլլար ըսելն՝ « հասարակարար անձ ունեցող ». ինչպէս « սրբակիցը » մեկնած է « հասարակարար ստոր » , նոյնպէս նման բաները:

ԺԵ. — Երաւիւմ (էջ 91).

Հեղինակը կը թարգմանէ « Երեք դեմք

ունեցող» . լաւ է : Բայց աւելի որոշ պիտի ըլլար ըսելն « երեք անձն ունեցող » :

ԺԶ. — Ժամակ (էջ 92) .

Այս բառին վրայ երկարօրէն խօսուած է և գրուած : Դուրեան Սրբազանի և Պ. Աճառեանի տուած մեկնութիւնը՝ միակ պարզ, խելացի և ճիշտ է . Ժամակ բառ մը մեր լեզուին մէջ գոյութիւն չունի . բառը « Ժամանակ » է . զոր օրինակողը սխալ գրեր է առ մասնիկը մոռնալով :

Այսպիսի սխալներ սովորական են ձեռագրաց մէջ այսպէս օր . ձեռագիր մը կը գրէ . « անգաւաւտի » = անգօտի, « յեկեցի » « սարկաւունս » են : Ողջմտութիւնը և տեղւոյն իմաստը բնական է չեն ներեր մեզ ասոնք նոր բառ համարիլ կուրօրէն, որով հարկ է սրբագրենք զգլխն վրիպակն և ըսենք . « Անգօտի », « Յեկեկեցի », « Սարկաւաղունս » :

Լ. ԳՐԻԳՈՐ ՍԱՐԳՍԵԱՆ  
(Շարունակելի)



### ԱՐԵՒԵԼՔ ԵՒ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՐՈՒԵՍԸ՝



Ինչ որ արուեստի վերաբերեալ առարկայ ցուցադրում է Հոռմ, մեր թուականի առաջին դարերէն սկսած, նա կրում է Աղեքսանդրեան դրոշմը : Եօթներորդ դարու կէտին, Յաւիտեանական քաղաքը կիսով չափ աւելի բիւզանդական դարձած էր : Բայց իւր շինուածապետերու, ոչ իւր վարձկան նախըքեարներու մտքիցը անցել էր կրեք քրիստոնէական արուեստ մը հանճարաստեղծել :

Պաշտօնական գիտութիւնն փորձեց եղածն վերագրել քայքայուած Յունաստանին, այն ամէնը ինչ որ ամբարուած էր պարսպաւեր Հոռմում : Սակայն յունական ճարտարապետութեան համակիրներ, բոլոր իրենց նախածնունդութեամբ, աւելի յառաջադիմութիւն մի պիտի չկարենային ցուցադրել քան փայտածածը քաղիչիկաներու տիպաբը :

Միջերկրականի յունական ոճի փոխանակութիւնը, Սիւրբոյ և Հայկական երկիրների գմբէաւոր ճարտարապետութեան հետ, անդադարձում է Ստրիչկովսկին, կարելի եղած չէ հասկանալի լինել առա-

ջիններուն, բայց եթէ երբ արդէն վերջինս վաղուց իւր կատարելութեան հասել էր :

Այն ժամանակներում երբ Հռոմայեցիք տարւում էին յօշոտուելու կրկէսին մէջ, կամ ապաստան էին փնտռում Գետնադամբանների տղմոտ և մութ նկուղների մէջ, անդին Արևելքում քրիստոնէական հասարակութիւններ ազատաբար զարգանում էին Պարսից պետութեան սահմանների մէջ : Լատինի սերահաբ պատմիչներն, իրենց գիրենք կարծում են տիեզերքի կեղրոնումը լինել : Նոքա պարզմտութեամբ տղէտ մնացել են կամ մոռացութեան տուել, կամ կամակորութեամբ կեղծած որ նոր հաւատը Արևմուտքից անհամեմատ արագութեամբ տարածուեց Արևելքում՝ այն ստեղծագործելու կենսունակ ժողովուրդների մէջ :

Կան ձեռագիրներ որ ցոյց են տալիս քրիստոնէական շինութիւնների գոյութիւնը Ատիաքենում, անդր քան Տիգրիսը, երկրորդ դարից սկսած : Սասանեանց հալածանքը այն ատեն միայն սկսուեց Հայաստանի մէջ, երբ քրիստոնէութիւնն պետական կրօնք հռչակուեց, և ապա անցաւ

1. Revue des Arts Asiatiques, 1925 N. 1. Paris.